ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՐԱՐԱՏԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МИРЗОЯН АРМЕН АРАРАТОВИЧ

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ФАКТОРОВ ПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ В ТРАНСФОРМАЦИЯХ ПОЛИТИЧЕСКИХ СИСТЕМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ГОСУДАРСТВА ИЗРАИЛЬ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2026

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում:**
Գիտական ղեկավար՝
քաղաքական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Արուսյակ Սեմյոնի Ալեքսանյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր **Վարդան Կորյունի Աթոյան**
քաղաքական գիտությունների թեկնածու **Իրինա Արթուրի Քարամյան**
Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2026 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 13:00-ին ԵՊՀ-ում գործող ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն եւ միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում: Հասցեն՝ ՀՀ, ք. Երեւան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունիսի 15-ին:
ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ **Առնակ Սարգսյան Գեորգիի**

Тема диссертации утверждена в **Ереванском государственном университете.**
Научный руководитель:
кандидат политических наук, доцент **Арусяк Семеновна Алексанян**
Официальные оппоненты:
доктор политических наук **Вардан Корюнович Атоян**
кандидат политических наук **Ирина Артуровна Карамян**
Ведущая организация: **Академия государственного управления Республики Армения**

Защита состоится 27 августа 2026 г. в 13:00 часов на заседании действующего в ЕГУ специализированного совета 056 “Политология и международные отношения” МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван 0025, Алека Манукяна, 1. С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ. Автореферат разослан 15 июня 2026 г.

Научный секретарь специализированного совета,
056 МОНКС КВОН РА,
кандидат политическихнаук, доцент **Арнак Георгиевич Саргсян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Քաղաքական կայունության հիմնախնդիրը և դրա համապարփակ ուսումնասիրությունը ժամանակակից քաղաքագիտության առանցքային և կարևոր ուղղություններից է: Քաղաքական համակարգի գործունեության արդյունավետությունը, պետական կառավարման շարունակականությունը ու կանխատեսելիությունը, հասարակական համերաշխությունը, անվտանգության ապահովումն ու սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները մեծապես պայմանավորված են քաղաքական կայունությամբ: Ժամանակակից աշխարհում պետությունները գործում են արագ փոփոխվող և երբեմն անկանխատեսելի քաղաքական միջավայրում, որտեղ ներքին քաղաքական գործընթացները սերտորեն փոխկապակցված են արտաքին քաղաքական և աշխարհաքաղաքական զարգացումների հետ՝ կրելով դրանց ուղղակի ու անուղղակի ազդեցությունը: Հենց այդ պայմաններում քաղաքական կայունության ապահովումը դարձել է պետությունների զարգացման ու անվտանգության ապահովման կարևոր նախապայմաններից, իսկ դրա գիտական ուսումնասիրությունը՝ քաղաքագիտության առաջնահերթ ուղղություններից մեկը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո քաղաքական կայունության խնդիրը դարձել է քաղաքագիտական հետազոտությունների առանցքային թեմա, սակայն հատկապես հայալեզու քաղաքագիտական գրականությունում այն դեռևս բավարար ուսումնասիրված չէ: Քաղաքական կայունության ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի անցումային հասարակությունների համար, որտեղ ժողովրդավարական ինստիտուտների ձևավորումն ու ամրապնդումը հաճախ ուղեկցվում են քաղաքական ճգնաժամերով ու ինստիտուցիոնալ անորոշություններով: Քաղաքական համակարգի կայունության ուսումնասիրությունների մեջ նկատվում է ևս մեկ միտում, երբ կայունությունն ուսումնասիրելիս հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է դրա վրա ազդող քաղաքական և ինստիտուցիոնալ գործոններին՝ երկրորդ պլան մղելով սոցիալ-տնտեսական նախադրյալները: Սակայն նոր մոտեցումները հանգում են նրան, որ սոցիալական և տնտեսական գործոնների անտեսումը վիճարկելի է ու կարող է հանգեցնել ինչպես տեսական, այնպես էլ գործնական լուրջ բացթողումների: Նախ՝ քաղաքական կայունությունը չի կարող լինել երկարաժամկետ, եթե այն չի հենվում սոցիալական արդարության, տնտեսական զարգացման և բնակչության ընդունելի կենսամակարդակի վրա: Բացի այդ, սոցիալական և տնտեսական գործոնները էապես ազդում են քաղաքական լեգիտիմության վրա: Եթե քաղաքական համակարգը չի արձագանքում հասարակության սոցիալ-տնտեսական պահանջներին, ապա նույնիսկ ինստիտուցիոնալ առումով կայուն համակարգը կարող է բախվել վստահության ճգնաժամի:

Ժամանակակից քաղաքագիտության մեջ լայնորեն կիրառվում են տարբեր ինդեքսներ և համեմատական գնահատման մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս չափել և գնահատել տարբեր երկրների քաղաքական համակարգերի կայունության մակարդակը, դրանց միտումները և իրականացնել համեմատական վերլուծություններ: Դա առանձնահատուկ կարևորություն ունի Հայաստանի Հանրապետության համար: Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը, անվտանգության մարտահրավերները, տարածաշրջանային հակամարտությունների ազդեցությունը և ներքաղաքական զարգացումների դինամիկան պայմանավորում են քաղաքական կայունության խնդրի առանձնահատուկ նշանակությունը: Սույն ատենախոսության առանցքային ուղղությունն է

2008-2023 թվականներին Հայաստանի ու Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության միտումների համեմատումն ու դրանց վրա ազդող գործոնների վերհանումը, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն նկարագրել փոքր երկրների քաղաքական գործընթացները, այլև իրականացնել դրանց խորքային համեմատական վերլուծություն՝ հիմնված քանակական համադրելի տվյալների վրա: Հայաստանի և Իսրայելի օրինակով նման վերլուծությունը առանձնահատուկ գիտական հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ երկու երկրներն էլ գործում են աշխարհաքաղաքական բարդ միջավայրում, ունեն անվտանգության մշտական մարտահրավերներ և միևնույն ժամանակ զարգացնում են ինստիտուցիոնալ և քաղաքական տարբեր մոդելներ:

Միևնույն ժամանակ, Հայաստանի և Իսրայելի միջերկրային հետազոտությունը թույլ է տալիս առանձնացնել նաև Իսրայելի կողմից կիրառվող քաղաքական կայունության ամրապնդման այն մեխանիզմները, որոնք կարելի է տեղայնացնել նաև Հայաստանի վրա՝ հաշվի առնելով համակարգի առանձնահատկությունները: Իսրայելի փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ անվտանգային մշտական սպառնալիքների և ներքաղաքական տարակարծությունների պայմաններում հնարավոր է պահպանել հարաբերական քաղաքական կայունություն՝ ինստիտուցիոնալ ճկունության, քաղաքական համակարգի ադապտացիոն կարողությունների և հասարակական համախմբման որոշակի մակարդակի շնորհիվ:

Այսպիսով, թեմայի արդիականությունը պայմանավորված է մի քանի հիմնավոր հանգամանքով.

Տեսական մակարդակում այն հնարավորություն է տալիս խորացնել գիտական պատկերացումները քաղաքական կայունության ու դրա սահմանումների մասին, վերհանել քաղաքագիտության մեջ կիրառվող տեսությունների շրջանակում քաղաքական կայունության վերաբերյալ մեկնաբանություններն ու քննարկումները, ինչպես նաև առանձնացնել այն ինդեքսները, որոնք կիրառելի են քաղաքական համակարգի կայունության չափումների ու գնահատումների ժամանակ:

Գործնական մակարդակում՝ այն չափում է 2008-2023 թվականներին Հայաստանի ու Իսրայելի քաղաքական համակարգի կայունության միտումներն ու վերհանում իսրայելական այն մեխանիզմներն ու փորձը, որոնք կարող են կիրառելի լինել Հայաստանում քաղաքական համակարգի կայունության ամրապնդման համատեքստում: Այս ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ արդեն իսկ հասանելի էին քաղաքական համակարգի կայունության չափման համար անհրաժեշտ ցուցիչների տվյալները, հնարավոր էր ամբողջական գնահատել քաղաքական գործընթացների արդյունքներն ու դրանց ազդեցությունը քաղաքական կայունության վրա, ինչպես նաև այն ներառում է կարևոր և արդեն իսկ ավարտված քաղաքական իրադարձություններ (իշխանափոխություններ, ընտրական ցիկլեր, սահմանադրական փոփոխություններ, պատերազմներ), ինչպես ճգնաժամային, այնպես էլ հարաբերական կայունության փուլեր, որոնք կարելի է գնահատել ոչ թե ընթացիկ, այլ ռետրոսպեկտիվ:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը. Քաղաքական կայունության, դրա վերաբերյալ տեսական մոտեցումների, չափման և գնահատման, ինչպես նաև քաղաքական համակարգի կայունության ապահովման մեխանիզմները մշտապես եղել են քաղաքագիտական ուսումնասիրությունների առանցքային տիրույթում: Հատկապես, արևմտյան քաղաքագիտական շրջանակում բազմակողմանի ուսումնասիրվել է

քաղաքական կայունությունը, սակայն դրա տեսամեթոդաբանական հիմքերն ու առանձնահատկությունները շարունակում են մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում:

Քաղաքական կայունության ուսումնասիրությունների համատեքստում արժեքավոր են Լեսլի Գրինի[1], Սեմուել Հանթինգթոնի[2], Գաբրիել Ալմոնդի[3], Դևիդ Իսթոնի[4], Թալքոթ Պարսոնսի[5], Արթուր Բենքսի, Ռոբերտ Թեքսթորի[6], Արթուր Գոլդբերգի[7], Էքարթ Ցիմերմանի[8], Իվո և Ռոզալինդ Ֆայերաբենդների[9] և այլոց ուսումնասիրությունները, որոնք քաղաքական կայունությունը դիտարկում և սահմանում տարբեր գործոնների պրիզմաներից, այդ թվում՝ արտաքին և ներքին փոփոխություններին արձագանքելու կարողության դիտակետից:

Հայաստանյան քաղաքագիտական գրականության մեջ քաղաքական կայունության խնդիրը քիչ է ուսումնասիրված և հիմնականում հատվածական անդրադարձներով՝ կապված քաղաքական համակարգի տրանսֆորմացիայի, ժողովրդավարացման և անվտանգության խնդիրների հետ: Առանձնահատուկ կարևորություն ունեն Արուսյակ Ալեքսանյանի խմբագրությամբ հրատարակված աշխատությունները[10], որոնցում ՔՀԿԻ մեթոդով ոչ միայն իրականացվում է Հայաստանի քաղաքական համակարգի կայունության մակարդակի գնահատում, այլև ներկայացվում տարածաշրջանի մի շարք երկրների համապատասխան ցուցանիշների համեմատական վերլուծությունը:

Քաղաքագիտության մեջ կիրառվող տեսությունների համատեքստում քաղաքական կայունության դիտարկումը թերևս կայունության ամենաքիչ ուսումնասիրված ուղղություններից է: Այս ատենախոսությունն իր բնույթով առանձնահատուկ է, քանի որ

---

[1] Green, L., “Support for the System”, British Journal of Political Science, 1985, Vol 15, N2, pp. 127-142.

[2] Huntington, S., “Political Order in Changing Societies”, Yale University Press, New Haven, Connecticut, 1968.

[3] Almond, G., “Political Development: Essays in Heuristic Theory”, Little Brown, Boston, 1970.

[4] Easton, D., “A Systems Analysis of Political Life”, University of Chicago Press, Chicago, 1965.

[5] Parsons, T., “The Social System”. Routledge, London,1991.

[6] Banks, A. et al, “A Cross-Polity Survey”, M.I.T. Press, Cambridge, Massachusetts, 1963.

[7] Goldberg, A., “A Theoretical Approach to Political Stability” (A paper presented at the 64th Annual Meeting of the American Political Science Association), Washington D.C, 1968.

[8] Zimmermann, E., “Government Stability in Six European Countries During the World Economic Crisis of the 1930s: Some Preliminary Considerations”, European Journal of Political Research, Vol. 15, N1, 1987, pp. 23-52.

[9] Feierabend, I. et al, “Aggressive Behaviors Within Polities, 1948-1962: A Cross - National Study”, The Journal of Conflict Resolution, Vol. 10, N3, 1966, pp. 249-273.

[10] Տե՛ս Արուսյակ Ալեքսանյանի խմբագրությամբ «Հարավային Կովկասի, ԵՎՐԱՋԷՍ և ԵՄ անդամ պետությունների քաղաքական կայունության ինդեքսը (ներերկրային և միջերկրային վերլուծություն) աշխատությունը, Արուսյակ Ալեքսանյանի խմբագրությամբ «Նորանկախ երկրների քաղաքական կայունությունն արդիականացման պայմաններում» աշխատությունը, Արուսյակ Ալեքսանյանի և Աշոտ Ալեքսանյանի «ԵԱՏՄ երկրների քաղաքական կայունության մարտահրավերները. Քաղաքական գործոնների ինդեքսը» աշխատությունը և Արուսյակ Ալեքսանյանի խմբագրությամբ «Դիմակայող քաղաքական համակարգերը հիբրիդային պատերազմների և խաղաղության խաչմերուկներում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա, Իրան, Ռուսաստան, Ուկրաինա)» աշխատությունը:

առաջին անգամ հայկական քաղաքագիտական գրականության մեջ անդրադարձ է կատարվում այս կատեգորիային՝ հետազոտության ամբողջ ընթացքում հիմնական շեշտադրումը դնելով Արդիականացման և Կոնֆլիկտների տեսությունների հիման վրա քաղաքական կայունության վրա ազդող ներքին ու արտաքին գործոնների ուսումնասիրությանը, բայց և դիտարկելով քաղաքական կայունությունը մյուս տեսությունների համատեքստում:

Քաղաքագիտական չափումներ, համեմատություններ և վերլուծություններ իրականացնելու արդյունավետ գործիքներից է ինդեքսների կառուցման մեթոդը: Քաղաքական համակարգի կայունության վերաբերյալ չափումները, մոդելավորումն ու կանխատեսումը հնարավորություն են տալիս գնահատել ռիսկերն ու ընդունել արդյունավետ քաղաքական որոշումներ ու լուծումներ: Քաղաքական համակարգի կայունության չափման և գնահատման համատեքստում կիրառելի են Համաշխարհային կառավարման ցուցիչները, Փխրուն երկրների ինդեքսը, The Heritage Foundation-ի Տնտեսական ազատության ինդեքսը, Համաշխարհային խաղաղության ինդեքսը, Օտարերկրյա ուղղակի ներդրումների վստահության ինդեքսը, Համաշխարհային ռազմականացման ինդեքսը, Մարդկային ներուժի զարգացման ինդեքսը և այլն: Սակայն առավել համընդգրկուն գնահատում իրականացնելու հնարավորություն է տալիս Արուսյակ Ալեքսանյանի մշակած Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը, որը, դիտարկելով քաղաքական կայունության վրա ազդող քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնները, թույլ է տալիս ինտեգրված ձևով գնահատել քաղաքական համակարգի կայունությունը՝ ընդգրկելով կայունության վրա ազդող գործոնների ամբողջ սպեկտրը:

Ուսումնասիրվող թեմայով գիտական աղբյուրների վերլուծությունը ցույց տվեց, որ հետազոտողները քաղաքական համակարգի կայունությունը, դրա վրա ազդող գործոնները դիտարկում են միայն որևէ ասպեկտի տեսանկյունից, երբեմն ուշադրությունից դուրս թողնելով կայունության վրա ազդեցության ամբողջ սպեկտրը: Ավելին, կայունության ժամանակակից սահմանումները, թեև ընդգրկում են մի շարք կարևոր ցուցանիշներ, հաճախ չեն համակցվում միասնական և ամբողջական տեսական շրջանակի մեջ, ինչի արդյունքում քաղաքական կայունությունը դիտարկվում է կարճաժամկետ գործընթացների կամ առանձին դեպքերի համատեքստում, այլ ոչ թե որպես համակարգային, բազմաչափ և փոխկապակցված երևույթ:

Հետազոտության առարկան և օբյեկտը. Սույն հետազոտության օբյեկտը քաղաքական կայունությունն է՝ որպես բազմաչափ և դինամիկ երևույթ, իսկ հետազոտության առարկան՝ Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության վրա ազդող ներքին և արտաքին գործոնները, ինչպես նաև Իսրայելում քաղաքական կայունության ապահովման և ամրապնդման ինստիտուցիոնալ ու գործառնական մեխանիզմներն ու դրանց հնարավոր կիրառումը Հայաստանի Հանրապետության համատեքստում:

Նպատակը և խնդիրները. Հետազոտության հիմնական նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել քաղաքական կայունության գիտատեսական հիմքերը, վերհանել քաղաքական համակարգի կայունության չափման ժամանակակից մոտեցումները, ինչպես նաև չափել ու գնահատել Հայաստանի ու Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության միտումները՝ առանձնացնելով կայունության ապահովման այն մեխանիզմները, որոնք կիրառելի են Իսրայելում ու կարող են տեղայնացվել նաև

Հայաստանի պարագայում: Հատուկ ուշադրություն է դարձվում քաղաքական համակարգի կայունության չափման ինդեքսների համադրելիության և կիրառելիության խնդրին՝ հաշվի առնելով Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կառուցվածքային ու գործառնական առանձնահատկությունները: Միևնույն ժամանակ, հետազոտությունը նպատակ ունի բացահայտել քաղաքական համակարգի կայունության վրա ազդող հիմնական գործոնները՝ ինչպես ներքին (ինստիտուցիոնալ զարգացում, սոցիալ-տնտեսական պատկեր, կառավարման արդյունավետություն), այնպես էլ արտաքին (աշխարհաքաղաքական միջավայր, անվտանգության մարտահրավերներ, միջազգային ազդեցություններ) համատեքստում:

Այս նպատակի իրականացման համար առաջադրվել են հետազոտական մի շարք խնդիրներ.

- Վերհանել քաղաքական կայունության վերաբերյալ սահմանումների հիմնական մոտեցումները՝ ընդգծելով դրանց հիմնական առանձնահատկություններն ու սահմանափակումները:
- Մշակել և ձևակերպել քաղաքական կայունության հեղինակային սահմանում, որը կարտացոլի կայունության բազմաչափ բնույթը:
- Առանձնացնել քաղաքական կայունության վերաբերյալ տեսական մոտեցումներն ու վերլուծել համակարգի ադապտիվ ինքնակարգավորման կարողությունները՝ ներքին և արտաքին ճնշումներին դիմակայելու համատեքստում:
- Ուսումնասիրել քաղաքական համակարգի կայունության չափման միջազգային ինդեքսները և մեթոդաբանությունները՝ գնահատելով դրանց ցուցիչների համադրելիությունը երկրների գնահատման համար:
- Հիմնավորել Հայաստանի և Իսրայելի ընտրությունը որպես քաղաքական կայունության համեմատական վերլուծության համար համադրելի դեպքեր՝ բացահայտելով կառուցվածքային, ինստիտուցիոնալ և գործառնական այն գործոնները, որոնք պայմանավորում են դրանց համեմատելիությունը քաղաքական համակարգի կայունության ուսումնասիրության տեսանկյունից:
- Ուսումնասիրել և համեմատել Համաշխարհային ռազմականացման, Համաշխարհային խաղաղության, Օտարերկրյա ուղղակի ներդրումների վստահության, Մարդկային ներուժի զարգացման, Տնտեսական ազատության և Փխրուն երկրների ինդեքսներում Հայաստանի և Իսրայելի ցուցանիշները՝ դրանք վերլուծելով քաղաքական համակարգի կայունության համատեքստում:
- Հիմնավորել Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի ընտրությունը որպես հետազոտության սուբյեկտ հանդիսացող երկրների քաղաքական կայունության միտումների համեմատության գործիք և դրա կիրառմամբ իրականացնել Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության միտումների համեմատական վերլուծություն:
- Վերհանել այն դոմինանտ գործոնները, որոնք դիտարկվող ժամանակահատվածում ամենամեծ ազդեցությունն են ունեցել երկու երկրների քաղաքական կայունության վրա:
- Առանձնացնել ինստիտուցիոնալ և քաղաքական այն մեխանիզմները, որոնք նպաստում են Իսրայելի քաղաքական համակարգի կայունության պահպանմանը և գնահատել դրանց հնարավոր տեղայնացումը Հայաստանի պայմաններում:

- Ձևակերպել գիտականորեն հիմնավորված եզրակացություններ և առաջարկներ՝ ուղղված Հայաստանի քաղաքական համակարգի կայունության ամրապնդմանը:

Ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմքերը. Ատենախոսության տեսամեթոդաբանական հիմքը համակարգային մոտեցումն է, որը ենթադրում է քաղաքական կայունության դիտարկում որպես ամբողջական և փոխկապակցված համակարգի՝ այն ձևավորող ինստիտուցիոնալ, նորմատիվային, գործընթացային և վարքագծային բաղադրիչների համադրությամբ: Համակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս բացահայտել ոչ միայն կայունության պահպանման կառուցակարգերը, այլև այն մեխանիզմները, որոնց միջոցով քաղաքական համակարգը վերարտադրվում է, վերափոխվում և արձագանքում փոփոխվող միջավայրին՝ առանց իր հիմնական գործառույթների խաթարման:

Համակարգային մոտեցմանը զուգահեռ ատենախոսությունում կիրառվել է նաև համակցված մոտեցումը, ինչը ենթադրում է տեսական և մեթոդաբանական տարբեր գործիքակազմերի համատեղ օգտագործում՝ ուսումնասիրվող երևույթն առավել համապարփակ վերլուծելու նպատակով: Ատենախոսությունում հիմնականում կիրառվել են որակական մեթոդներ, որոնք հիմնված են եղել նաև քանակական տվյալների վերլուծության վրա: Միայն Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի կիրառմամբ Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգի կայունության միտումների ուսումնասիրության ժամանակ դիտարկվել է ավելի քան 1100 քանակական տվյալ, որը ներառել է պաշտոնական վիճակագրական ցուցանիշներ և միջազգային ինդեքսների տվյալներ, որոնք ենթարկվել են համադրման և քանակական վերլուծության: Միաժամանակ, հետազոտության շրջանակում կիրառված համադրելի ինդեքսների միջոցով հավաքագրվել և ուսումնասիրվել է հավելյալ շուրջ 1230 քանակական տվյալ: Նշված տվյալների ամբողջությունը համակարգվել և վերլուծվել է միասնական մեթոդաբանական մոտեցմամբ, ինչի արդյունքում ձևավորվել են համադրելի ժամանակաշարեր: Վերլուծության արդյունքները ներկայացվել են գծապատկերների և աղյուսակների տեսքով, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն տեսանելի դարձնել Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության միտումները, այլև կատարել դրանց համեմատական գնահատում, բացահայտել տատանումների փուլերն ու ժամանակաշրջանները:

Գիտական գրականության վերլուծությունը ատենախոսության մեթոդաբանական կարևոր բաղադրիչներից է, որի նպատակն է եղել ձևավորել քննարկվող խնդրի վերաբերյալ համապարփակ պատկերացում, ինչպես նաև վերհանել թեմային անդրադարձած հեղինակների գիտական մոտեցումները: Գիտական գրականության ուսումնասիրությունից զատ, իրականացվել է նաև միջազգային կազմակերպությունների, Հայաստանի և Իսրայելի պետական մարմինների ու վիճակագրական ծառայությունների, ինչպես նաև միջազգային տվյալների բազաների փաստաթղթային նյութերի, այդ թվում՝ երկու երկրների վերաբերյալ զեկույցների, հաշվետվությունների մանրակրկիտ ուսումնասիրություն և վերլուծություն:

Ատենախոսությունում կիրառվել է նաև դեպքային ուսումնասիրության մեթոդը, որի միջոցով վերլուծվել են Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերը: Միաժամանակ, համեմատական վերլուծության մեթոդը կիրառվել է երկու երկրների քաղաքական համակարգերի կայունության միտումների համադրական գնահատման նպատակով: Այս շրջանակում համեմատվել են միջազգային տարբեր ինդեքսներում Հայաստանի և Իսրայելի ցուցանիշները, ուսումնասիրվել դրանց դինամիկան ըստ

տարիների և վերլուծվել փոփոխությունների պատճառահետևանքային կապերը: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ էլ ուսումնասիրվել է երկու երկրների քաղաքական համակարգերի զարգացման էվոլյուցիան:Ատենախոսությունում կիրառվել են նաև վիճակագրական տվյալների վերլուծության, ժամանակային շարքերի միտումների ուսումնասիրության և էմպիրիկ վերլուծության մեթոդները, որոնք օգտագործվել են քանակական տվյալների մշակման, տարբեր ինդեքսների ցուցանիշների համադրական գնահատման և տվյալների միջև առկա փոխկապակցվածությունների բացահայտման նպատակով: Վերլուծության, համադրման և ընդհանրացման մեթոդներն էլ կիրառվել են ոչ միայն երկու երկրների ինդեքսային տվյալների, քաղաքական համակարգերի կայունության միտումների ուսումնասիրության և վերլուծության, այլև Իսրայելի քաղաքական կայունության ապահովման ինստիտուցիոնալ և գործընթացային մեխանիզմների ուսումնասիրման ընթացքում՝ գնահատելու դրանց հնարավոր տեղայնացումը և կիրառումը Հայաստանի քաղաքական իրականության պայմաններում:

Հետազոտության հարց. Ելնելով հետազոտության որակական բնույթից՝ հետազոտության հարցերի սահմանման համար կիրառվել է համակցված հարցի տեսակը՝ միավորելով գնահատողական և բացահայտողական հարցերի տեսակները:

Հետազոտության հարցերն են.

- Քաղաքագիտության մեջ կիրառվող ո՞ր տեսությունների միջոցով կարելի է առավել արդյունավետ դիտարկել Հայաստանում և Իսրայելում քաղաքական համակարգի կայունության գործընթացները:
- Քաղաքական համակարգի կայունության ինչպիսի՞ միտումներ են ունեցել Հայաստանն ու Իսրայելը 2008-2023 թվականներին և որո՞նք են այդ կայունության վրա ազդող արտաքին ու ներքին գործոնները:
- Իսրայելի փորձի համեմատական վերլուծությամբ դուրս բերված ինստիտուցիոնալ և քաղաքական ո՞ր մեխանիզմների տեղայնացումը կարող է դրական նպաստել Հայաստանի քաղաքական համակարգի կայունության մակարդակի վրա:

Ատենախոսության գիտական նորույթը. Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է քաղաքական կայունության տեսական վերաիմաստավորմամբ, դրա չափման համալիր մոտեցման կիրառմամբ և Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի կայունության գնահատման ու ամրապնդմանն ուղղված կիրառական առաջարկությունների մշակմամբ՝ Իսրայելի փորձի համեմատական վերլուծության հիման վրա: Ատենախոսության շրջանակում առաջին անգամ փորձ է արվել համադրել տեսական, մեթոդաբանական և կիրառական մակարդակները մեկ ամբողջական հետազոտական տրամաբանության մեջ:

Հետազոտության հիմնական գիտական նորույթները կարելի է ձևակերպել հետևյալ դրույթներով.

- Հայկական քաղաքագիտական ուսումնասիրություններում առաջին անգամ տրվել է քաղաքական կայունության համապարփակ, հեղինակային սահմանում, որտեղ այն դիտարկվում է ոչ միայն որպես քաղաքական համակարգի կայուն վիճակ, այլև որպես դինամիկ գործընթաց՝ հիմնված համակարգի ադապտիվ ինքնակարգավորման կարողության վրա՝ ներքին և արտաքին մարտահրավերներին արձագանքելու համատեքստում:

- Հայրենական քաղաքագիտական ուսումնասիրություններում առաջին անգամ քաղաքական կայունությունը ուսումնասիրվել և դիտարկվել է քաղաքագիտության մեջ կիրառվող տեսությունների համատեքստում: Արդիականացման, Ինստիտուցիոնալ, Կոնֆլիկտների, Պետականակենտրոն, Կառուցվածքային-ֆունկցիոնալ և Ռացիոնալ ընտրության տեսությունների շրջանակներում կատարվել է քաղաքական կայունության տեսական մոտեցումների համալիր համադրական վերլուծություն, ինչի արդյունքում վեր են հանվել քաղաքական կայունության աղբյուրների և մեխանիզմների վերաբերյալ տեսական մոտեցումները:
- Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի և մյուս ինդեքսների միջոցով առաջին անգամ իրականացվել է Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության միտումների համեմատական վերլուծություն՝ 2008-2023 թվականների ժամանակահատվածի համար: Ընդ որում, ՔՀԿԻ-ով չափման ժամանակ կիրառվել է միասնական չափման գործիքակազմ, ինչը հնարավորություն է տվել բացահայտել ոչ միայն երկու երկրներում քաղաքական համակարգի կայունության միտումները, այլև դրա փոփոխության պատճառներն ու օրինաչափությունները: Ավելին, ՔՀԿԻ չափումն Իսրայելի մասով արվել է առաջին անգամ:
- Վեր են հանվել Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության կառուցվածքային և գործոնային առանձնահատկությունները, ներառյալ ներքաղաքական, ինստիտուցիոնալ և արտաքին ազդեցությունները, ու տրվել է դրանց համակարգային մեկնաբանություն՝ համադրելով քանակական տվյալները և որակական վերլուծությունը:
- Առանձնացվել են Իսրայելի քաղաքական համակարգի կայունության ապահովման ինստիտուցիոնալ և քաղաքական մեխանիզմները՝ դիտարկելով դրանք որպես ադապտիվ կառավարման գործիքներ, որոնք կարող են կիրառելի լինել համեմատական վերլուծության շրջանակում:
- Մշակվել են կիրառական առաջարկություններ Հայաստանի քաղաքական համակարգի կայունության ամրապնդման համար, որոնց հիմքում դրված է Իսրայելի փորձի ընտրովի ադապտացիան՝ հաշվի առնելով Հայաստանի քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական միջավայրի առանձնահատկությունները:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը. Ատենախոսության տեսական նշանակությունը լրացնում և հարստացնում է քաղաքական կայունության վերաբերյալ առկա գիտական մոտեցումները՝ առաջարկելով քաղաքական կայունության սահմանման հեղինակային մոտեցում և քաղաքագիտության մեջ կիրառվող տեսությունների շրջանակում քաղաքական կայունության վերաբերյալ համապարփակ մեկնություններ:

Ատենախոսության գործնական նշանակությունը Հայաստանի քաղաքական համակարգի կայունության ամրապնդմանն ուղղված առաջարկների մեջ է: Դրանք ընդգրկում են ինչպես ինստիտուցիոնալ բարեփոխումների, այնպես էլ անվտանգային, տնտեսական և գաղափարական գործոնների արդյունավետ համադրման մեխանիզմների ներդրումը: Հետազոտության արդյունքները կարող են ուղեցույց ծառայել քաղաքական

որոշում կայացնող մարմինների, հետազոտական ինստիտուտների և միջազգային կառույցների համար՝ նպաստելով Հայաստանի քաղաքական համակարգի կայունության բարձրացմանը, ռիսկերի նվազեցմանը և երկարաժամկետ զարգացման ռազմավարությունների ձևավորմանը: Այս հետազոտությունը հայկական քաղաքագիտական ուսումնասիրություններում քաղաքական կայունության վերաբերյալ արժեքավոր ներդրում է, որը կարող է առիթ կամ հիմք դառնալ հետագա ուսումնասիրությունների և համեմատական վերլուծությունների:

Հետազոտության սահմանափակումները. Ատենախոսության իրականացման հիմնական սահմանափակումը եղել է կայունության վրա ազդող արտաքին գործոնների զսպման մեխանիզմների ուսումնասիրությունը, քանի որ դրանք հիմնականում անվտանգային միջոցառումներ են ու ինչպես Իսրայելի, այնպես էլ Հայաստանի պարագայում համարվում են գաղտնի տեղեկություն: Առկա բացը փորձ է արվել լրացնել բաց աղբյուրների օգնությամբ՝ վերլուծելով պաշտոնական հայտարարություններ, փորձագիտական գնահատականներ և ակադեմիական հրապարակումներ: Սոցիալ-տնտեսական գործոնների դիտարկման ժամանակ սահմանափակումներ են եղել նաև Իսրայելի պետական մարմիններից վիճակագրական տվյալների ձեռքբերման հարցում, քանի որ Իրանի և Իսրայելի միջև մարտական գործողությունների ու տարածաշրջանային լարվածության պատճառով Իսրայելն արգելափակել էր պետական կայքերին հասանելիությունը: Դրանց մի մասն ուսումնասիրվել է այլ երկրների տարածքից VPN-ի կիրառման միջոցով, մյուսներն էլ Իսրայելի պետական մարմինների, հատկապես՝ Վիճակագրության կենտրոնական բյուրոյի հետ ամիսներ տևած էլեկտրոնային նամակագրության միջոցով: Տվյալների սահմանափակ հասանելիությունը փորձ է արվել լուծել նաև երկրորդային աղբյուրների միջոցով՝ միջազգային կազմակերպությունների հաշվետվությունների, հետազոտական կենտրոնների տվյալների և ակադեմիական հրապարակումների համադրմամբ: Այս մոտեցումը թույլ է տվել բարձրացնել տվյալների վավերականությունն ու ապահովել հետազոտության արդյունքների մեթոդաբանական հիմնավորումը՝ նվազեցնելով տեղեկատվական սահմանափակումներից բխող ազդեցությունը:

Բացի այդ, երկու երկրներում մի շարք ցուցիչներ հաշվարկվում են տարբեր մեթոդաբանություններով (օրինակ՝ աղքատության մակարդակով): Նման դեպքերում նախապատվություն է տրվել Համաշխարհային բանկի կամ միջազգային տվյալների այլ բազաների ցուցանիշներին, ինչը հնարավորություն է տվել համեմատական վերլուծության շրջանակում կիրառել միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և համադրելի տվյալներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում հիմնախնդրի գիտական մշակվածությունը, սահմանվում են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության հարցերը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև սահմանափակումների և կառուցվածքի մասին տեղեկություններ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ յուրաքանչյուրում երեք ենթագլուխ, եզրակացությունից ու օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 190 էջ է:

Ատենախոսության առաջին՝ «**Քաղաքական կայունության տեսամեթոդական հիմքերը**» գլուխը, բաղկացած է 3 ենթագլխից և ներկայացնում է քաղաքական կայունության տեսամեթոդական հիմքերը, քաղաքական կայունության սահմանումների առանձնահատկությունները, քաղաքագիտությունում կիրառվող տեսությունների համատեքստում քաղաքական կայունության մեկնությունն ու քննարկումները, ինչպես նաև վերլուծվում են քաղաքական կայունության չափման ժամանակակից մոտեցումները, առանձնացվում այն ինդեքսները, որոնց միջոցով չափվում և գնահատվում են քաղաքական համակարգի կայունության վրա ազդող առանձին գործոնները:

Առաջին՝ «**«Քաղաքական կայունություն» հասկացությունը. սահմանումները և մոտեցումները**» ենթագլխում, ներկայացվում է «կայունություն» երևույթի գիտական մեկնաբանությունները, անդրադարձ է կատարվում «քաղաքական կայունության» վերաբերյալ ժամանակակից պատկերացումներին, հիմնավորվում մասնագիտական գրականության մեջ «քաղաքական կայունություն» եզրույթի վերաբերյալ միասնական սահմանման և մոտեցման բացակայությունը՝ անդրադարձ կատարելով նաև հայկական քաղաքագիտական գրականության մեջ քաղաքական կայունության վերաբերյալ ուսումնասիրություններին, իսկ հայկական քաղաքագիտական գրականության մեջ նաև դրանց սահմանափակ լինելուն: Ենթագլխում առանձնահատուկ ուսումնասիրության են ենթարկվում քաղաքական կայունության վերաբերյալ սահմանումները, դրանց տեսական և մեթոդաբանական տարբերությունները, ինչպես նաև տրվում է քաղաքական կայունության հեղինակային սահմանում, որտեղ հիմնական շեշտադրումը դրվում է պետության ադապտիվ ինքնակարգավորման համակարգային ունակության վրա, երբ ներքին և արտաքին փոփոխությունների ազդեցության պարագայում այն շարունակում է գործել արդյունավետորեն, բնորոշվում է որոշակի ամբողջականությամբ և ֆունկցիոնալությամբ, հասարակության անդամների բավարարվածությամբ, ինչպես նաև հասարակության զարգացման նպատակների և գործընթացների շուրջ սոցիալ-քաղաքական հիմնական ուժերի մոտ առկա կոնսենսուսով:

Երկրորդ՝ «**Քաղաքական կայունության մեկնությունն ու քննարկումները տեսությունների համատեքստում**» ենթագլխում, ուսումնասիրվում են քաղաքագիտությունում կիրառվող տեսությունների համատեքստում քաղաքական կայունության մեկնությունն ու քննարկումները: Մասնավորապես, քաղաքական կայունությունը դիտարկվում է Արդիականացման, Ինստիտուցիոնալ, Կոնֆլիկտների, Պետականակենտրոն, Ֆունկցիոնալ-կառուցվածքային և Ռացիոնալ ընտրության տեսությունների համատեքստում: Յուրաքանչյուր տեսության շրջանակներում ուսումնասիրության են ենթարկվում քաղաքական կայունության ձևավորման նախադրյալները, արտաքին և գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ համակարգի կայունության վրա, պահպանման մեխանիզմների վերաբերյալ տեսական մոտեցումները: Այս համատեքստում վերլուծվում են նաև տարբեր տեսությունների միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները՝ նպատակ ունենալով

ձևավորել քաղաքական կայունության վերաբերյալ համալիր տեսական պատկերացում: Բացի այդ, ենթագլխում հիմնավորվում է նաև այն մոտեցումը, թե ինչու է ատենախոսության շրջանակներում քաղաքական կայունության վրա ազդող ներքին գործոնների ուսումնասիրության ժամանակ որպես տեսական հիմք ընդունվել Արդիականացման, իսկ արտաքին գործոնների պարագայում՝ Կոնֆլիկտների տեսությունները:

Երրորդ՝ «**Քաղաքական համակարգի կայունության չափումները**» ենթագլխում, վեր են հանվում քաղաքական կայունության չափման ժամանակակից մոտեցումները, առանձնացվում այն ինդեքսները, որոնց միջոցով չափվում և գնահատվում են քաղաքական համակարգի կայունության վրա ազդող առանձին գործոնները: Մասնավորապես, ենթագլխում հիմնավորվում է, թե ինչու են ինդեքսները համարվում քաղաքական համակարգի կայունության չափման նախընտրելի գործիք, ինչպես են դրանք օգնում գնահատել ռիսկերն ու ընդունել արդյունավետ քաղաքական որոշումներ ու լուծումներ: Ենթագլխում մանրամասն նկարագրվում են քաղաքական համակարգի կայունության չափումների ժամանակ կիրառվող ինդեքսներից Համաշխարհային կառավարման ցուցիչների, Փխրուն երկրների ինդեքսի, Տնտեսական ազատության ինդեքսի, Համաշխարհային խաղաղության ինդեքսի, Օտարերկրյա ուղղակի ներդրումների վստահության ինդեքսի, Մարդկային ներուժի զարգացման ինդեքսի, Համաշխարհային ռազմականացման ինդեքսի և Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի մեթոդաբանությունները, սահմանափակումները, ինչպես նաև դրանց կիրառելիության քաղաքական համակարգի կայունության գնահատման համատեքստում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում այս ինդեքսների ցուցանիշների ընտրության տրամաբանությանը, տվյալների աղբյուրներին, չափման մեխանիզմներին:

Ատենախոսության երկրորդ՝ «**Քաղաքական համակարգի կայունության համեմատական վերլուծությունն ու Իսրայելի ինստիտուցիոնալ փորձի կիրառման հնարավորությունները Հայաստանում**» գլուխը, ևս բաղկացած է 3 ենթագլխից և խորամուխ է լինում տարբեր ինդեքսների համատեքստում Հայաստանի և Իսրայելի ցուցանիշներին: Գլխում խորը վերլուծության են ենթարկվում երկու երկրների քաղաքական համակարգերի կայունության միտումները ու դրանց ամրապնդման իսրայելական այն մեխանիզմները, որոնք կարող են տեղայնացվել և կիրառվել Հայաստանի Հանրապետության պարագայում:

Առաջին՝ «**Հայաստանն ու Իսրայելը՝ քաղաքական համակարգի կայունության չափումների համատեքստում**» ենթագլխում, մանրամասն ուսումնասիրվում է վերը նշված ինդեքսներում երկու երկրների ցուցանիշները՝ ատենախոսության շրջանակներում դիտարկվող 2008-2023 թվականներին: Այսպես, ենթագլխում նախ և առաջ, որպես համեմատության սուբյեկտ, հիմնավորվում է Հայաստանի և Իսրայելի ընտրությունը, դրանց նմանությունները: Գծապատկերների և աղյուսակների միջոցով ներկայացվում են տարբեր ինդեքսներում երկու երկրների ցուցանիշները, իրականացվում է դրանց խորքային համեմատական վերլուծություն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով արձանագրված արդյունքների պատճառահետևանքային հիմքերին: Մասնավորապես, վերլուծության են ենթարկվում Հայաստանի և Իսրայելի ռազմականացման բարձր աստիճանի պատճառները, համեմատականներ անցկացվում ՀՆԱ-ում ռազմական ծախսերի մասնաբաժինների միջև, ինչպես նաև

ուսումնասիրվում է երկու երկրների քաղաքական համակարգի կայունության վրա անվտանգային միջավայրի ազդեցությունը: Առանձին քննության առարկա են դառնում նաև 2008-2023 թվականներին երկու երկրների քաղաքական համակարգի կայունության համար սպառնալիք հանդիսացած արտաքին և ներքին իրադարձություններն ու ճգնաժամերը:

Երկրորդ՝ «**Հայաստանի ու Իսրայելի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսների համեմատական վերլուծությունը**» ենթագլխում, Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի միջոցով չափվում է 2008-2023 թվականներին երկու երկրների քաղաքական համակարգերի կայունությունն ու դրանց միտումների միջև անց են կացվում համեմատականներ: Նախ և առաջ, ենթագլխում հիմնավորվում է չափման համար հենց այս ինդեքսի ընտրությունը, ներկայացվում են ինդեքսի մաս կազմող երեք ենթաինդեքսների՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական, ցուցիչները, դրանց աղբյուրները, տվյալների հավաքման մեթոդաբանական առանձնահատկությունները: Գծապատկերների և աղյուսակների միջոցով դարձյալ իրականացվում է քանակական տվյալների համեմատական վերլուծություն, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել 2008-2023 թվականների միջակայքում Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության դինամիկան, ինչպես նաև դրա փոփոխությունների պատճառահետևանքային կապերը: Վերլուծության շրջանակում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում քաղաքական, սոցիալական և տնտեսական ցուցանիշների փոխազդեցությանը, դրանց ազդեցությանը քաղաքական համակարգի ընդհանուր կայունության վրա, ինչպես նաև ներքին և արտաքին այն գործոնները, որոնք պայմանավորել են ցուցանիշների աճը կամ անկումը: Միաժամանակ, ներկայացվում է երեք ենթաինդեքսների համադրական գնահատումը՝ նպատակ ունենալով բացահայտել քաղաքական համակարգի կայունության վրա առավել նշանակալի ազդեցություն ունեցող գործոնները և ըստ տարիների կայունության միտումները:

Երրորդ՝ «**Իսրայելի քաղաքական համակարգի կայունության ինստիտուցիոնալ մեխանիզմների գործարկման հնարավորությունը Հայաստանի պարագայում**» ենթագլխում, առանձնացվում են քաղաքական համակարգի կայունության ամրապնդման Իսրայելի փորձի մի քանի մեխանիզմներ և դրանց հնարավոր տեղայնացումն ու կիրառման հավանականությունը Հայաստանի պարագայում՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքական, իրավական և սոցիալ-տնտեսական միջավայրի առանձնահատկությունները: Մասնավորապես, վերլուծության են ենթարկվում ինստիտուցիոնալ կայունության ապահովման, քաղաքական ճգնաժամերի կառավարման, անվտանգության համակարգի արդյունավետ կազմակերպման, պետական ինստիտուտների դիմակայունության բարձրացման, հասարակություն-պետություն փոխգործակցության և հանրային համախմբման ձևավորման ուղղությամբ Իսրայելում կիրառվող մեխանիզմները: Միաժամանակ, գնահատվում է դրանց համադրելիությունն ու կիրառելիությունը Հայաստանի քաղաքական համակարգում՝ առանձնացնելով այն գործոնները, որոնք կարող են նպաստել կամ խոչընդոտել համապատասխան փորձի տեղայնացմանը:

Եզրակացության մեջ ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, եզրահանգումներն ու առաջարկությունները:

1. Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքական կայունությունն առավել արդյունավետորեն ապահովվում է այն համակարգերում, որտեղ գործում են հակակշիռների և զսպումների մեխանիզմներ, ինստիտուցիոնալացված քաղաքական մասնակցություն և ճգնաժամերի կառավարման կանխատեսելի գործիքակազմ, ինչը պայմանավորում է համակարգի դինամիկ ադապտացիան ներքին և արտաքին մարտահրավերներին:
2. Հայկական և օտարալեզու մասնագիտական գրականության մեջ չկա քաղաքական կայունության մեկ միասնական և համընդհանուր սահմանում: Սույն աշխատանքի շրջանակում մեր կողմից առաջարկված հեղինակային սահմանումը արժեքավոր է այն առումով, որ շեշտադրումը դնում է ոչ թե կայունության առանձին ասպեկտների վրա, այլ բուն քաղաքական համակարգի կայունության և դրա ֆունկցիոնալության վրա՝ առաջ քաշելով համակարգի ադապտիվ ինքնակարգավորման կարողությունը:
3. Քաղաքագիտությունում կիրառվող տեսությունների պրիզմայում քաղաքական կայունության համապարփակ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալ այն գործոնները, որոնք ազդում են քաղաքական համակարգի կայունության վրա և օգնում մշակել ռազմավարություններ ու ծրագրեր անկայունության հնարավոր ռիսկերը մեղմացնելու և հաղթահարելու համար: Տեսություններից յուրաքանչյուրն անդրադառնում է կայունությունը պայմանավորող գործոնների մի հատվածին կամ ընդգծում քաղաքական համակարգի կայունության այս կամ այն կողմը, այդուհանդերձ իրենց միասնության և համադրության մեջ դրանք առաջարկում են հիմք՝ վերլուծելու կայունության մարտահրավերներն ու հնարավորությունները ու դրանք ուսումնասիրելու տարբեր դիտակետերից:
4. Հետազոտությունը վերահաստատեց, որ ինդեքսները շարունակում են մնալ քաղաքական համակարգի կայունության չափման լավագույն գործիքներից, քանի որ դրանք հնարավորություն են տալիս բարդ և բազմաչափ քաղաքական և սոցիալ-տնտեսական գործոնները վերածել օպերացիոնալացված, համադրելի և վերլուծելի ցուցանիշների ամբողջության: Ընդ որում, ինդեքսների արդյունավետությունը պայմանավորված է դրանց կառուցման մեթոդաբանական հիմնավորմամբ, ցուցիչների ընտրության և կշռային համակարգի կիրառման ռացիոնալությամբ, ինչն էլ հիմնավորված էր Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի ընտրության պարագայում:
5. Որպես համեմատության օբյեկտ Հայաստանի և Իսրայելի ընտրությունը պայմանավորված էր մի շարք գործոններով, այդ թվում՝ կառավարման համանման ձևը, աշխարհաքաղաքական բարդ միջավայրը, ռազմականացման խիստ բարձր մակարդակը և այլն, որոնք հնարավորություն տվեցին իրականացնել բովանդակային և կառուցվածքային համեմատություն՝ բացահայտելու քաղաքական համակարգի կայունության ձևավորման ու պահպանման առանձնահատկությունները տարբեր համատեքստերում: Արդյունքում, Հայաստանի և Իսրայելի համեմատական վերլուծությունը հնարավորություն տվեց ոչ միայն բացահայտել ընդհանուր օրինաչափություններն ու տարբերությունները, այլև ձևակերպել առաջարկներ քաղաքական համակարգի կայունության ամրապնդման ինստիտուցիոնալ և քաղաքական գործիքների վերաբերյալ:

6. Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքական համակարգերի կայունության ապահովման մոդելները որոշ դեպքերում նման են՝ պայմանավորված անվտանգային միջավայրով, ռազմականացման խիստ բարձր մակարդակով, կառավարման ձևի կառուցվածքով և ինստիտուցիոնալ զարգացման աստիճանով: Հետազոտությունը փաստում է, որ այդ երկրներում քաղաքական համակարգի կայունությունը չի կարող դիտարկվել մեկ չափորոշչի շրջանակում. դրա ապահովման համար անհրաժեշտ են քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունությունների դրական միտումներ:
7. Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու երկրների քաղաքական համակարգերի կայունության վրա դոմինանտ ազդեցություն են ունեցել արտաքին գործոնները, որոնք կապված էին այդ երկրների արտաքին անվտանգության ու արտաքին քաղաքական միջավայրի հետ: Երբ դրանք կրում են մշտական և բարձր ինտենսիվություն, ինչպես դիտարկվող ժամանակահատվածում, քաղաքական համակարգի կայունությունը հաճախ ձեռք է բերում անվտանգության վրա հիմնված բնույթ՝ ուժեղացնելով գործադիր իշխանության դերակատարությունը: Սակայն երկարաժամկետ կայունության համար անհրաժեշտ է նաև հակակշիռների և վերահսկողական մեխանիզմների արդյունավետ գործարկում, որպեսզի անվտանգային օրակարգը չսահմանափակի ժողովրդավարական գործընթացների զարգացումը: Այդ գործոնները ուղիղ ազդել են նաև ներքաղաքական օրակարգի ձևավորման, իշխանություն-ընդդիմություն դիսկուրսի ու ներքաղաքական գործընթացների տրամաբանության վրա:
8. Հայաստանի դեպքում արտաքին գործոնների ազդեցությունն առավել ընդգծվել է անվտանգության համակարգի կախվածության, հարևան երկրների հետ հակամարտային հարաբերությունների և միջազգային դաշնակցային սահմանափակումների միջոցով: Հայաստանի քաղաքական զարգացումների հիմնական շրջադարձերը՝ 2018 թվականի քաղաքական իրադարձությունները, 2020 թվականի 44-օրյա պատերազմը և հետպատերազմական ճգնաժամը, անուղղակիորեն պայմանավորված էին նաև տարածաշրջանային և գլոբալ հակակշիռների փոփոխությամբ: Իսրայելի դեպքում էլ արտաքին գործոնները դրսևորվել են հիմնականում ՀԱՄԱՍ-ի և Հեզբոլահի հետ բախումների դինամիկայի, ինչպես նաև արաբական երկրների հետ հարաբերությունների կարգավորման գործընթացով:
9. Դիտարկվող 2008-2023 թվականների միջակայքում Իսրայելի՝ Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը միշտ եղել է դրական, իսկ Հայաստանի՝ ՔՀԿԻ-ն 2016 և 2020 թվականներին գրանցել է բացասական ցուցանիշ: Բացի այդ, նշված ժամանակահատվածում Հայաստանի ՔՀԿԻ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2019 թվականին, իսկ Իսրայելում՝ 2022-ին, մինչդեռ ամենացածր ցուցանիշը Հայաստանում եղել է 2020 թվականին, իսկ Իսրայելում՝ 2012-ին: Ընդ որում, դիտարկվող ժամանակահատվածում երկու երկրների արտապատկերված ցուցանիշները համանման են՝ սակայն հակադիր միտումներով: Երբ բարձրացել է Հայաստանի ՔՀԿԻ ցուցանիշը, նույն ժամանակահատվածում Իսրայելում գրանցվել է հետընթաց: Սա թույլ է տալիս արձանագրել, որ Հայաստանի և Իսրայելի քաղաքական համակարգերի կայունության դինամիկան, չնայած ընդհանուր դրական

երկարաժամկետ միտումին, ձևավորվում է կառուցվածքային և համատեքստային տարբեր գործոնների ազդեցությամբ:

10. Հայաստանի դեպքում որոշ տարիներին Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի բացասական արժեքները վկայում են քաղաքական համակարգի խոցելիության և ճգնաժամային փուլերի մասին, որոնք պայմանավորված են ներքաղաքական լարվածությամբ և ինստիտուցիոնալ վերափոխումներով: Իսրայելի դեպքում ինդեքսի մշտապես դրական արժեքները ցույց են տալիս քաղաքական համակարգի հարաբերական ինստիտուցիոնալ դիմադրողականությունը, նույնիսկ քաղաքական ցնցումների պայմաններում:
11. Թե՛ Հայաստանի, և թե՛ Իսրայելի փորձը վկայում է, որ փոքր և միջին չափի երկրներում, հատկապես անվտանգային տեսանկյունից զգայուն տարածաշրջաններում, քաղաքական համակարգի կայունությունը հիմնականում կախված է արտաքին գործոնների դինամիկայից: Կայունության ապահովումը, հետևաբար, պետք է դիտվի ոչ միայն ներքին ինստիտուցիոնալ ամրապնդման, այլև արտաքին քաղաքական ճկունության և ռազմավարական հավասարակշռության ապահովման համատեքստում:
12. Եթե մինչև 2018 թվականը Հայաստանում քաղաքական համակարգի անկայունությունը հիմնականում պայմանավորված էր ներքին գործոններով, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական բնույթի, ապա 2020 թվականից հետո Հայաստանում դոմինանտ են քաղաքական համակարգի կայունության վրա ազդող արտաքին գործոնները, որոնք էլ ուղղակիորեն ազդում են հանրային համերաշխության ու քաղաքական ուժերի միջև երկխոսության վրա, ինչը կարևոր պայման է քաղաքական համակարգի կայունության համար:

Հիմնվելով ատենախոսության եզրակացությունների վրա՝ ներկայացնում ենք կիրառական հետևյալ առաջարկները.

1. **Նոր կառավարության ընտրության տրամաբանության փոփոխություն**. Դիտարկվող ժամանակահատվածում, բացառությամբ 2017 թվականի, Հայաստանի պարագայում Քաղաքական գործոնների ինդեքսը բացասական է եղել նաև այն տարիներին, երբ տեղի են ունեցել համապետական ընտրություններ: Սա ցույց է տալիս, որ ընտրական գործընթացները հաճախ ուղեկցվել են ներքաղաքական լարվածությամբ և լեգիտիմության շուրջ վեճերով, ինչի հետևանքով դրանք միշտ չէ, որ կարողացել են հանդես գալ որպես քաղաքական մրցակցության կայունացնող ինստիտուտ: Նման պայմաններում քաղաքական ճգնաժամը կարող է խորանալ նաև վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացի ընթացքում, որը ամրագրված է Սահմանադրության 115-րդ հոդվածում, քանի որ անվստահության քվեն ինքնին ապահովում է միայն գործադիր իշխանության փոփոխություն՝ առանց երաշխավորելու կառավարման շարունակականությունն ու կանխատեսելիությունը: Այդ պատճառով նպատակահարմար է անվստահության քվեի ընթացակարգը լրացնել այնպիսի ինստիտուցիոնալ մեխանիզմով, որը կնվազեցնի քաղաքական ցնցումների հավանականությունը: Մասնավորապես առաջարկվում է, որ գործող վարչապետին անվստահություն հայտնելու քվեարկությունից առաջ նոր վարչապետի թեկնածուն պարտադիր ներկայացնի ոչ միայն իր թեկնածությունը, այլև ապագա կառավարության ամբողջական կազմը՝ ներառյալ նախարարներին և պետական

կառավարման ու անվտանգության համակարգի առանցքային պաշտոնների թեկնածուներին (ԱԱԾ տնօրեն, ԱՀԾ ղեկավար, ՊԵԿ նախագահ, ԱԽ քարտուղար, ՊՎԾ ղեկավար): Նման մոտեցումը անվստահության գործընթացը անձնակենտրոն մակարդակից կտեղափոխի ծրագրային և ինստիտուցիոնալ հարթություն, կնվազեցնի քաղաքական անորոշությունը և կբարձրացնի խորհրդարանական մեծամասնության պատասխանատվությունը, քանի որ քվեարկությունը կվերաբերի ոչ թե մեկ անձի, այլ ամբողջ կառավարման համակարգին: Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք, որ ՀՀ Սահմանադրության 115-րդ հոդվածի 1-ին կետը փոփոխվի և լրացվի հետևյալ բովանդակությամբ. «Վարչապետին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ կարող է ներկայացնել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը միայն այն դեպքում, եթե որոշման նախագծով միաժամանակ առաջարկվում է նոր վարչապետի թեկնածու, ինչպես նաև ներկայացվում է նրա կողմից ձևավորվելիք կառավարության կազմը՝ ներառյալ նախարարների և պետական կառավարման ու անվտանգության համակարգի՝ օրենքով սահմանված կարգով նշանակվող առանցքային պաշտոնների թեկնածուները»:

2. **Պետական վերահսկիչի ինստիտուտի ներդրում**. Ատենախոսության շրջանակում իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում Իսրայելի կոռուպցիայի ընկալման նույնիսկ ամենացածր ցուցանիշը գերազանցել է Հայաստանի ամենաբարձր ցուցանիշը: Թեև 2008-2023 թվականներին Հայաստանում այդ ցուցանիշը բարելավվել է՝ աճելով շուրջ 62%-ով, այն շարունակում է զգալիորեն զիջել Իսրայելին: Միաժամանակ Հայաստանի սոցիալական գործոնների ինդեքսը չի ցուցաբերում կայուն աճի միտում. վատթարացել է Ջինի գործակիցը, աղքատությունը շարունակում է մնալ կառուցվածքային խնդիր, իսկ ստվերային տնտեսության կրճատումը սահմանափակ է: Այս համադրությունը վկայում է, որ տնտեսական աճը լիարժեք չի վերածվում սոցիալական զարգացման և հանրային վստահության ամրապնդման: Նման պայմաններում կարևոր է պետական վերահսկողության ինստիտուցիոնալ մեխանիզմների ուժեղացումը: Այդ նպատակով առաջարկվում է ներդնել Իսրայելի փորձին մոտ Պետական վերահսկիչի ինստիտուտ, որը կգործի որպես Ազգային ժողովին հաշվետու անկախ վերահսկողական մարմին՝ միավորելով ֆինանսական և վարչարարական վերահսկողության գործառույթները: Այս ինստիտուտը կարող է գնահատել ոչ միայն ֆինանսական խախտումները, այլև պետական կառավարման արդյունավետությունը և պետական ծրագրերի իրականացումը՝ նպաստելով թափանցիկության, հաշվետվողականության և քաղաքական գործընթացների կանխատեսելիության բարձրացմանը: Միաժամանակ, ի տարբերություն Իսրայելի մոդելի, առաջարկվում է պահպանել Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ որպես մարդու իրավունքների խախտումների արագ արձագանքի և կանխարգելման անկախ մեխանիզմ: Արդյունքում կձևավորվի վերահսկողության փոխլրացնող համակարգ, որտեղ Պետական վերահսկիչը կկենտրոնանա կառավարման և համակարգային վերահսկողության վրա, իսկ Մարդու իրավունքների պաշտպանը՝ մարդու իրավունքների պաշտպանության և արագ արձագանքի վրա:

3. **ՀՀ Ազգային անվտանգության նոր ռազմավարության ընդունում.** Դիտարկվող ժամանակահատվածում Հայաստանի՝ Քաղաքական գործոնների ինդեքսի հակամարտությունների առկայության բաղադրիչը եղել է տվյալային տեսանկյունից ամենաազդեցիկ ցուցիչներից մեկը: Առավելագույն արժեքը գրանցելով 2020 թվականին՝ դիտարկվող ժամանակահատվածի վերջում այն պահպանել է բարձր մակարդակը: 2020 թվականին ընդունված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունն ակնհայտորեն փոփոխության և խորքային վերանայման կարիք ունի: Ռազմավարության մի շարք հիմնարար դրույթներ, մասնավորապես՝ Արցախի հետ կապված բաժինները, այլևս չեն արտացոլում առկա քաղաքական և անվտանգային իրականությունը, ինչի հետևանքով փաստաթուղթը կորցրել է իր գործառնական նշանակության զգալի մասը: Սակայն խնդիրը սահմանափակված չէ միայն բովանդակության արդիականացմամբ: Հայաստանի պարագայում ազգային անվտանգության ռազմավարությունը շարունակում է մնալ հիմնականում փաստաթղթային բնույթի քաղաքական հռչակագիր, որտեղ չկա նաև հստակ կապ ներքին լեգիտիմության և հանրային ընկալումների հետ: Ի տարբերություն Իսրայելի, որտեղ անվտանգային բնույթի քաղաքականությունը և ռազմավարությունները կառուցվում են հանրային լայն քննարկումների, քաղաքական կոնսենսուսի և անվտանգության սպառնալիքների համատեղ ընկալման վրա, Հայաստանում անվտանգության ռազմավարական մտածողությունը հաճախ ձևավորվում է փակ շրջանակներում՝ հասարակության հետ սահմանափակ հաղորդակցությամբ: Նոր ռազմավարությունը պետք է հստակ ներկայացնի ոչ միայն սպառնալիքները և պատասխանները, այլև այն տրամաբանությունը, որով պետությունը պատրաստ է կիրառել ուժ կամ գնալ անվտանգային փոխզիջումների: Այս գործընթացն անհրաժեշտ է անվտանգային քաղաքականության նկատմամբ հանրային վստահության ձևավորման և պետական ինստիտուտների լեգիտիմության ամրապնդման համար, ինչն իր հերթին հանդիսանում է պետության երկարաժամկետ քաղաքական կայունության ապահովման հիմնարար երաշխիքը:
4. **ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի լիազորությունների ընդլայնում**. Հայաստանի Հանրապետության համար առաջնային է այնպիսի մոդելի ձևավորումը, որտեղ անվտանգության քաղաքականությունը կդառնա առավել դիսկուրսային, հաշվետու և քաղաքացիական վերահսկողության ենթակա գործընթաց: Փակ կառույցները, հնարավորին չափով, պետք է դառնան առավել բաց: Կարծում ենք, որ միայն այս դեպքում հնարավոր կլինի անվտանգության և քաղաքական կայունության միջև ձևավորել այնպիսի փոխկապակցվածություն, որը չի հանգեցնի ոչ քաղաքական գործընթացների ու պետական ապարատի վրա ուժային կառույցների ազդեցության մեծացմանը, ոչ էլ պետության պաշտպանունակության թուլացմանը, այլ կնպաստի կայունության ինստիտուցիոնալ և ժողովրդավարական ամրապնդմանը: Ուստի, առաջարկում ենք Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի լիազորությունների իրական ընդլայնում, ինչի արդյունքում հանձնաժողովը ձևական լսումներից և օրենսդրական նախաձեռնությունների քննարկումից զատ, իրական հնարավորություններ կունենա գնահատելու պաշտպանական և անվտանգային քաղաքականությունները, դրանց համատեքստում իրականացվող գործողությունները: Այս հանձնաժողովը, առաջարկվող Պետական

վերահսկիչի ինստիտուտի հետ համատեղ, պետք է ունենա նաև բյուջետային իրական վերահսկողության հնարավորություն: Սա նոր հնարավորություն է իշխող քաղաքական ուժի ու ընդդիմության միջև համագործակցության համար, ինչը էապես կարող է նվազեցնել նաև ներքաղաքական անկայունությունը:

5. **Հայաստանում անվտանգության և խաղաղության վերաբերյալ ինստիտուցիոնալ դիսկուրսի զարգացում**. Իսրայելի փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ մշտական սպառնալիքների պայմաններում հասարակական և ակադեմիական մակարդակներում հնարավոր է ձևավորել կայուն բանավեճ պատերազմի նպատակահարմարության, խաղաղության պայմանների և ռիսկերի վերաբերյալ ու դա չի կարող բնորոշվել որպես «ազգային շահին դավաճանություն կամ թուլություն»: Անհրաժեշտ է, որ Հայաստանում այս դիսկուրսը տեղափոխվի փորձագիտական, ակադեմիական և քաղաքական հարթակներ՝ համալսարանների, հետազոտական կենտրոնների և քաղաքական ուժերի ներգրավմամբ: Համալսարանական հարթակները պետք է դառնան այլընտրանքային սցենարների մշակման կենտրոններ, որտեղ «պատերազմի և խաղաղության» հարցերը կուսումնասիրվեն ոչ թե կարգախոսների, այլ տվյալների և միջազգային փորձի հիման վրա:
6. **Ազգային անվտանգության և հետախուզական ծառայությունների կարողությունների զարգացում**. Իսրայելի փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ և ինստիտուցիոնալ առումով զարգացած հետախուզական համակարգը ազգային անվտանգության ապահովման կարևորագույն բաղադրիչներից է, որն ուղղակի ազդեցություն ունի նաև քաղաքական կայունության վրա: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն բարձր արդյունավետությամբ հավաքագրել և վերլուծել տեղեկությունը, այլև ապահովել պետության արագ և համակարգված արձագանքը անվտանգային սպառնալիքներին՝ կանխելով դրանց ներքաղաքական համակարգի վրա հնարավոր ապակայունացնող ազդեցությունը: Համակարգի ապակուսակցական լինելը ձևավորում է անվտանգության մարմինների նկատմամբ կայուն վստահություն՝ անկախ իշխանության փոփոխություններից կամ ներքաղաքական ճգնաժամերից: Հայաստանի պարագայում հետախուզական ծառայությունների ինստիտուցիոնալ զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արտաքին անվտանգային մարտահրավերները հաճախ անմիջական ազդեցություն են ունենում երկրի ներքաղաքական գործընթացների և քաղաքական կայունության վրա: Այս տեսանկյունից նշանակալի էր Հայաստանում արտաքին հետախուզության առանձին ծառայության ստեղծումը: Ուստի, խիստ կարևոր է նաև զարգացնել հետախուզական համակարգի վերլուծական և կանխատեսման կարողությունները՝ ստեղծելով տեղեկատվության հավաքագրման, համադրման և ռազմավարական գնահատման առավել արդյունավետ մեխանիզմներ:
7. **Ազգային համախմբման նոր տեսլական**. 2022 և 2023 թվականներին Հայաստանում արձանագրվել է Տնտեսական գործոնների ինդեքսի ամենաբարձր ցուցանիշները, սակայն այն հիմնականում պայմանավորված էր արևմտյան պատժամիջոցների պատճառով դեպի Ռուսաստան վերարտահանման ծավալների կտրուկ աճի և ռուսաստանցի ռելոկանտների կողմից կապիտալի ներհոսքի հետ: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ թե՛ ռուս-ուկրաինական պատերազմը, թե՛ արևմտյան պատժամիջոցների համակարգը կարող են կրել ժամանակավոր բնույթ: Հետևաբար, դրանց արդյունքում ձևավորված տնտեսական աճի ներկայիս

դինամիկան չի կարող դիտարկվել որպես երկարաժամկետ և կայուն զարգացման հիմք: Այս պայմաններում Հայաստանի համար առավել նպատակահարմար է ռազմավարական մակարդակում վերանայել տնտեսական զարգացման ուղղությունները՝ շեշտադրումը տեղափոխելով գիտելիքահեն և տեխնոլոգիական տնտեսության ձևավորման վրա: Այս գործընթացում կարևոր դեր կարող է ունենալ նաև սփյուռքի ներուժի համակարգված օգտագործումը՝ հավելյալ ներդրումների ներգրավման, առաջատար տեխնոլոգիական գիտելիքների փոխանցման և միջազգային շուկաների հասանելիության ընդլայնման տեսանկյունից: Իսրայելի փորձը ցույց է տալիս, որ սփյուռքի հետ ինստիտուցիոնալացված կապերը կարող են կարևոր գործոն լինել ոչ միայն ֆինանսական աջակցություն ապահովելու, այլև գլոբալ տեխնոլոգիական և գիտական ցանցեր ձևավորելու գործում: Նման մոտեցումը կարող է նպաստել նաև ազգային համախմբման նոր մոդելի ձևավորմանը: Եթե երկար ժամանակ հայկական ազգային համախմբման հիմնական գաղափարական առանցքները կապված էին պատմական արդարության վերականգնման կամ անվտանգության հարցերի շուրջ ձևավորված օրակարգերի հետ, ապա ժամանակի ընթացքում այդ մոդելները աստիճանաբար կորցնում են իրենց համախմբող ազդեցությունը: Իսրայելը նույնպես տարբեր փուլերում փորձել է անցում կատարել պետական և հասարակական զարգացման այնպիսի մոդելի, որտեղ ազգային համախմբման հիմքը միայն արտաքին սպառնալիքի ընկալումը չէ, այլ նաև տնտեսական զարգացումը, տեխնոլոգիական առաջընթացը, ինստիտուցիոնալ կայունությունը և քաղաքացիական ինքնության ամրապնդումը: Հայաստանի պարագայում ևս նման անցումը կարող է դիտարկվել որպես երկարաժամկետ քաղաքական կայունության կարևոր նախապայման: Արտաքին հակամարտության շուրջ ձևավորված համախմբման մոդելից դեպի զարգացման, պետական ինստիտուտների ամրապնդման, կրթության, գիտության և տնտեսական առաջընթացի վրա հիմնված համազգային օրակարգի ձևավորումը կարող է լրացնել առաջացած գաղափարական վակուումը և նպաստել ավելի կայուն, մրցունակ և կանխատեսելի քաղաքական համակարգի ձևավորմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Armen Mirzoyan, “Digital Authoritarianism as a Modern Threat to Democratic Stability: Restriction of Freedom or Network Politicization?”, Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2023, Vol.2, N3 (6), pp.62-75, doi: https://doi.org/10.46991/JOPS/2023.2.6.062
2. Armen Mirzoyan, “Theoretical Approaches to Political Stability: How Do Theories Interpret the Factors Influencing It?”, Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2024, Vol.3, N2 (8), pp.65-80, doi: https://doi.org/10.46991/JOPS/2024.3.8.065
3. Armen Mirzoyan, “Indices as Tools for Measuring Political Stability: Theoretical Approaches”, Տարածաշրջան և աշխարհ, 2025, N5 (60), pp.16-20, doi: https://doi.org/10.58587/18292437-2025.5-16

4. Armen Mirzoyan, “Political Stability and the Global Militarization Index: A Comparative Analysis of Armenia and Israel, 2008–2023”, Տարածաշրջան և աշխարհ, 2025, N6 (61), pp.25-29, doi: https://doi.org/10.58587/18292437-2025.6-25
5. Armen Mirzoyan, “Measuring the Political System Stability of Armenia and Israel from 2008 to 2023: A Comparative Analysis Using the SIPS Model”, Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2025, Vol.4, N3 (12), pp.12-32, doi: https://doi.org/10.46991/JOPS/2025.4.12.012
6. Արմեն Միրզոյան, «Պետության քաղաքական կայունության սահմանումների տեսական և մեթոդաբանական հիմքերը», Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի, 2025, N1, էջ 73-87

МИРЗОЯН АРМЕН АРАРАТОВИЧ

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ФАКТОРОВ ПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ В ТРАНСФОРМАЦИЯХ ПОЛИТИЧЕСКИХ СИСТЕМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ГОСУДАРСТВА ИЗРАИЛЬ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”. Защита диссертации состоится 27 августа 2026 г. в 13:00 часов на заседании действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА (адрес: РА, г. Ереван, 0025, ул. Алека Манукяна, 1).

РЕЗЮМЕ

В диссертации комплексно исследуются теоретические и методологические основы политической стабильности, современные подходы к измерению стабильности политических систем, а также тенденции устойчивости политических систем Республики Армения и Государства Израиль на основе сравнительного анализа. Актуальность исследования обусловлена необходимостью выявления и оценки механизмов обеспечения политической стабильности в условиях нарастающих внутренних и внешних вызовов, включая трансформацию политических институтов, региональные угрозы безопасности и изменения геополитической среды. Особое внимание уделяется проблеме сопоставимости и применимости существующих индексов измерения стабильности политической системы с учетом структурных и функциональных особенностей политических систем двух стран. В рамках исследования с применением Индекса стабильности политической системы анализируются ключевые внутренние и внешние факторы, влияющие на стабильность политической системы. Сравнительный анализ Армении и Израиля позволяет не только оценить уровень и динамику стабильности политических систем двух государств, но и выявить практические механизмы, применяемые в Израиле для обеспечения устойчивости и непрерывности функционирования политической системы в кризисных условиях. В результате диссертация направлена на разработку прикладных предложений, ориентированных на укрепление политической стабильности Республики Армения.

Во введении обосновывается актуальность темы, раскрывается степень научной разработанности проблемы, определяются объект и предмет исследования, его цель и задачи, формулируются теоретико-методологические основы, исследовательские вопросы, научная новизна, теоретическая и практическая значимость диссертации, а также приводятся сведения об ее ограничениях и структуре.

Первая глава диссертации - «**Теоретико-методологические основы политической стабильности**» - состоит из трех подглав. В ней рассматриваются теоретико-методологические основы политической стабильности, особенности определений политической стабильности, а также интерпретации и дискуссии

вокруг политической стабильности в контексте различных теорий, применяемых в политической науке. Кроме того, в главе анализируются современные подходы к измерению политической стабильности, выделяются индексы, с помощью которых измеряются и оцениваются отдельные факторы, влияющие на стабильность политической системы.

Вторая глава диссертации - «**Сравнительный анализ стабильности политических систем и возможности применения институционального опыта Израиля в Армении**» - также состоит из трех подглав и рассматривает показатели Армении и Израиля в контексте различных индексов, включая Индекс стабильности политической системы. В главе проводится детальный анализ тенденций стабильности политических систем двух стран, а также израильских механизмов их укрепления, которые могут быть адаптированы и применены в условиях Республики Армения.

MIRZOYAN ARMEN ARARAT

COMPARATIVE ANALYSIS OF THE FACTORS OF POLITICAL STABILITY IN THE TRANSFORMATIONS OF THE POLITICAL SYSTEMS OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE STATE OF ISRAEL

Dissertation under 23.00.02 "Political Institutions and Processes," aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on 27 August 2026, at 13:00 at the Specialized Council 056 "Political Sciences and International Relations" of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

SUMMARY

In the dissertation, the theoretical and methodological foundations of political stability are comprehensively studied, along with contemporary approaches to measuring the stability of political systems, and the trends in the stability of the political systems of the Republic of Armenia and the State of Israel, based on comparative analysis. The relevance of the study is driven by the need to identify and assess mechanisms to ensure political stability amid growing internal and external challenges, including the transformation of political institutions, regional security threats, and changes in the geopolitical environment. Special attention is paid to the comparability and applicability of existing indices for measuring the stability of political systems, taking into account the structural and functional features of the two countries' political systems. Within the framework of the study, the key factors influencing the stability of the political system are analyzed, both internal and external, using the Stability Index of Political Systems (SIPS). The comparative analysis of Armenia and Israel makes it possible not only to assess the levels and trends in the stability of the political systems of the two states, but also to identify practical mechanisms in Israel that ensure the stability and continuity of system functioning under crisis conditions. As a result, the dissertation aims to offer applied recommendations to strengthen the political stability of the Republic of Armenia.

In the introduction, the relevance of the topic is substantiated, the degree of scholarly development of the problem is presented, and the object and subject of the research are defined, along with its aim and objectives. It also outlines the theoretical and methodological foundations, research questions, scientific novelty, and the theoretical and practical significance of the dissertation, as well as providing information on the work's limitations, and its structure.

The first chapter of the dissertation, entitled "**Theoretical and Methodological Foundations of Political Stability**," consists of three subchapters and presents the theoretical and methodological foundations of political stability, the specific features of its conceptual definitions, as well as the interpretations and debates surrounding political stability within the context of various theories applied in political

science. In addition, the chapter analyzes contemporary approaches to measuring political stability, identifying indices used to assess individual factors influencing a political system's stability.

The second chapter of the dissertation, entitled *"***Comparative Analysis of the Stability of Political Systems and the Possibilities of Applying Israel's Institutional Experience in Armenia***,"* also consists of three subchapters and examines in greater depth the indicators of Armenia and Israel within the framework of various indices, including the Stability Index of Political Systems (SIPS). The chapter provides a detailed analysis of trends in the political stability of the two countries, as well as Israeli mechanisms for strengthening stability that may be localized and applied in the Republic of Armenia.